Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

1567

83
R-93

№ 212

# ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԸՆՏԱՆԻՔ

Թարգմանութիւն Գերմաներէնէ

Ալեքսանդր Տէր Մարուգեանց:

Հրատարակութիւն

Ա. ՏԷՐ ՄԱՐՈՒԳԵԱՆՑԻ:

ԵՐԵՒԱՆ

Ի Տպարանի Զաքարիայ Գ. Յովսէփեանց

1876

20 03

Дозволено Цензурою Тифлисъ. 10 Ноября 1875 года.

# ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԸՆՏԱՆԻ։

Աւելի քան 200 տարի յառաջ, Եապոնացւոց տէրութեան բազում կղզիների մէկի մէջ կենում էր մի ազնուազգոյն մարդ Տիտոս անունով։ Իւր ազնիւ ծագման և մեծամեծ բարերարութեանց պատճառաւ, նա հասարակաց պատուի մէջ էր։

Արդէն նորա ծնանելուց շատ տարի յառաջ, եկած էին Աստուածանուէր և սուրբ մարդիկ հեռու ծովային աշխարհը՝ այս տէրութեան կռապաշտ մարդկանցը ծանուցանելու աւետարանական լոյսը։ Հազարներով դիմեցին իւրեանց քարոզիչների կողմը և մկրտուեցին։ Տիտոսը ևս քրիստոնեայ էր և գտնումէր իւր մեծազգոյ[illegible]

րանութիւնը Աստուծոյ և Քրիստոսի հաւատոյ մէջ։ Աւելի ու աւելի տարածվումէր այս երկրումը քրիստոնէական Աստուածպաշտութիւնը, և յուսալի էր, թէ բոլոր Ճապոնիան կղզի անկենդան կուռքերից դէպի ճշմարիտ և կենդանի Աստուածը։

Սակայն քուրմերը, որք փախենալով կորցնել իւրեանց պատիւը և առատ եկամուտքը, գրգռեցին կայսերը և իշխաններին, որք հպատակ էին նորանց[illegible] վանել քրիստոնեայքը Ճապոնացւոց տէրութիւնից։ Սաստիկ հրաման դուրս եկաւ պատժել բոլորին, որք հրաժարվում չէին քրիստոնէական հաւատից։ Սակայն, որովհետև քրիստոնեայք աւելի լաւ էին համարում մեռանել, քանթէ անհաւատարիմ լինել Աստուծուն և Փրկչին, և պար-



մանալի ինքնակայութեամբ կրում էին չարաչար պատիժները։

Թագաւորը, որի հպատակութեան տակ Տիտոսն էլ էր, ուղղեց իւր առաջին հալածանքը դէպի նա։ Նա կարծումէր այսպէս՝ “Եթէ յաջողեցայ ինձ այս մարդուն, որին արժանի յարգանք են տալիս քրիստոնեայքը, յորդորել քրիստոնէական հաւատից հրաժարուելու, այն ժամանակ բոլոր քրիստոնեայքը կ՚հետևեն նորա օրինակին”։ Նա այսպէս հրամայեց կոչել նորան իւր պալատը, և սկսեց ճարտարախօսութեամբ համոզել նորան իւր հաւատիցը հրաժարուելու։ Բայց որովհետև ի զուր էին ամենայն շողոքորթութիւնքը և խոստմունքը, Թագաւորը սկսեց սպառնալ թէ կ՚հրամայի ահալից և զարհուրացի կերպիւ մահաչարաչար առնել նորան։ Սա-

կայն Տիտոսը մնաց անյողդողդ: «Ես պատրաստ եմ, խօսեց նա, իմ Թագաւոր, տալ արիւնս և կեանքս, բայց ես չեմ կարող տանել այն, ինչ որ ընդդէմ է խղճմտանքիս: Իմ հաւատարմութիւնս դէպ ի Աստուած թող գրաւ լինի քեզ, որ ես արդար և հաւատարիմ կլինիմ մինչև ի մահը քեզ և մեր Երկնային Թագաւորին, բայց աւելի ես պատրաստ եմ մեռնել իմ Աստուծոյ և Փրկչի համար: Մահը քրիստոնէից համար դուռն է դէպի յաւիտենական կեանքը:

Թագաւորը աղաղակեց խիստ զայրացած. «բարի է եթէ դու մահից չես վախենում, ես աւելի ազդու հնարներ կ'գտնեմ քեզ ստիպելու շրջելով երեսը և ցոյց տալով դուռը, հասկացրեց նորան՝ որ դուրս գնայ:



Տիտոսը ունէր երեք գեղեցիկ ծաղկած և սիրարժան երեխայ: Սիմէօնը, երէց որդին՝ էր 16 տարեկան. Մարթայ աղջիկը 14 տարեկան և Մատթէոս, փոքրագոյն և անչափ սիրելի որդին, դեռ ևս չկար ինը:

Տիտոսը և նորա Աստուածանուէր, համախոհ ամուսինը պայման էին դրել, որ բարեպաշտ և երկիւղած կրթեն իւրեանց երեխայքը և մանաւանդ պատշաճապէս սնուցանեն քրիստոնէական հաւատը:

Մի օր, երբ որ ծնողքը և երեխայքը չոքած կատարում էին իւրեանց առաւօտեայ աղօթքը, յանկարծ զինուորականքը շրջապատեցին տունը: Մեծաւորը մտաւ սենեակ և կամակոր, մռայլ կերպարանքով, խօսեց դէպի Տիտոսը՝ «ինձ հրամայել են տանել քո կեանքը

որդուն։ Եթէ չհրաժարուի նա հաւատից, նորան կայրենք"։ Հայրը սարսափեց, մայրը մահագունատուեցաւ։ Նոքա չվախեցան իւրեանց որդւոց կորստեանից, այլ թէ նա կարող էր՝ տեսանելով այն բոցավառ կրակը, սարսափել և իսկոյն հրաժարուել հաւատից։ "Ո՛հ, որդի, ասաց Հայրը, մօտ բեր այն սրբակրօն ալեւորին, Պողիկարպոսին, որի վերայ յաճախ պատմել եմ քեզ։ Գիտես, երբ նորան ասացին, որ հրաժարուի հաւատից և զրպարտէ քրիստոնէութիւնը ապա թէ ոչ նորան կայրեն, նա պատասխանեց". Ես ծառայում Նորան 86 տարի և բաց ի բարութիւնից՝ ոչինչ վատութիւն չեմ տեսել նորանից։ Ուրեմն ինչ պատճառաւ պիտի զրպարտեմ իմ Տիրոջս և Փրկչիս։ Նա ուրախութեամբ թողեց իւրեան



այրելու, մտածիր, որդի, Ո՛վ է ուրեմն մեր Տէրը, որին Պողիկարպոս 86 տարի ծառայելով, դեռ ևս գնում է դէպ ի կրակը։ Արա այդ բանը ուրախութեամբ, որպէս նա ծեր լինելով, նոյնպէս և դու մատաղ հասակում։

Մայրը խօսեց արտասուելով՝ այո, սիրելի որդի, մեռիր ուրախութեամբ։

Իսկ տղայն աղաղակեց՝ "Ո՛հ մայր, մի՛ լար, ես ուրախ եմ, մեռնելու, ես չեմ վախենում մահից։ Մեր Փրկչի համար յօժարութեամբ զոհում եմ կեանքս"։

Եղբայրը և քոյրը ուղղեցին նորա վերայ իւրեանց արտասուալից աչերը և տուեցին զգալի հրաժարական ողջոյն։ Բոլորը ցանկանում էին հետևել նորան, բայց զինուորականը չթողեց ասելով. յետ գընացէք, դուք իրաւունք չունիք դուրս գա-

լու։ Բոլորը դրկեցին սիրելի Մաթէոսին։ Սիմէօնը և Մարթան համարեայ թէ չէին պօկ գալիս նորանից, իսկ նա ասումէր „ո՛հ թողէք ինձ, ես ուրախութեամբ եմ գնում երկինքը։ Այն տեղ մենք կըրկին կ՚տեսնուենք“։

“Խստաբարոյ հայր, դու անգութ մայր, աղաղակեց զինուորականը։ Կատարեցէք թագաւորի հրամանը, ապա՛ ազատուած կլինի ձեր որդին։ Դուք ինքեանքդ էք մտցնում նորան կրակը“։ „Մի՛թէ կարծում էք, թէ ծանր չէ մեզ բաժանուել մեր սիրարժան երեխայից“, խօսեցին հայրը և մայրը դէպ ի զինուորականը, ապա դարձուցին իւրեանց խօսքը դէպ ի որդին. „գնա սիրելի որդի, Աստուած քո հետ։ Կարճատեւ ցաւը կըերի քեզ ուրախութիւն յաւիտենական“։



Զինուորականը բռնելով երեխայի ձեռքից դուրս տարաւ նորան։ Երեխայն յաճախ յաճախ յետ էր նայում։ Նորա աչքերը լցուեցան արտասուքով, սակայն նա ծիծաղումէր։ Իսկ ծնողքը մտիկ էին տալիս պատուհանից, մինչև նորա պալատ հասնելը։ Պալատի բակը շրջապատած էր բարձր պարիսպներով. բոլորը ուղղեցին իւրեանց տխրագին աչերը դէպի այնտեղը։ „Ո՜հ Աստուած“ յանկարծ ձայն տուեց մայրը „ահա՛ բարձրանում է ծուխը նորան այժմս այրումեն“ իսկ հայրը մտը բերեց Աբրահամին, նայեց երկինքին և ասաց „քեզ է, ո՛վ Աստուած մատուցանում այդ զոհը“։ Բոլորը չոքեցին ու սկսեցին աղօթել։

Մինչև միւս առաւօտը անքուն և արտասուալից էին բոլորը։ Կարմրագոյն ա-

ռաւօտեան արշալոյսը նոցա միտը բերեց այն բոյը, որի մէջ պլուել էր սիրելի Մատթէոսը։

Շատ չտեւեց, և ահա դարձեալ երևեցաւ սենեակում գինուորականաց մեծաւորը։ „Ձեր կրտսեր որդին", ասաց նա, „դարձել է մոխիր և փոշի, ես եկել եմ կոչելու ձեր աղջիկը. իսկ դու", ասաց նա շրջելով դէպի դուստրը, „դու սիրունատես աղջիկ, մի յիմարանար եղբօրդ նման։ Տես, թագաւորը պատրաստ է զարդարել քեզ ոսկիքով և մարգարիտներով"։

„Ի՞նչ են հարկաւոր ոսկին և մարգարիտը" պատասխանեց Մարթան. „հաւատը որ պահպանում է բազմաչարաչար տանջանքներով աւելի թանկագին է քան թէ ոսկին, (որ կրակում հալւում է) և բարեպաշտութիւնը այն հաւատալից մար-



գարիտն է, որը չի կարելի փոխարինել ուրիշ բանի հետ։ Ուրեմն, ի՞նչ օգուտ մարդուս, եթէ տիրի նա բոլոր և համայն աշխարհը, իսկ իւր հոգւոյ մէջ վնաս կրի"։

„Ոհ", հառաչեց մեծաւորը, սակաւ ինչ շարժուելով նորա խօսքերից. „Ա՛նաս կը-լինէր՝ այն ժամանակը, երբ այդ ծաղկած գեղեցկութիւնդ թառամէր ծաղկի նման"։

Մարթան պատասխանեց, „ամենայն մի միսը նման է խոտին, և մարդկան գեղեցկութիւնը դաշտի ծաղիկներին։ Խոտը չորանում է և ծաղիկը թառամում։ Իսկ հոգին, եթէ կամակատար է Աստուծոյ, յաւիտեան մշտնջենաւոր է"։

„Լաւ է" պատասխանեց մեծաւորը, „ուրեմն ես պէտք է յայտնեմ քեզ որ դու կձգուես կատաղի գազանաց առաջև նոքա

կպատառեն քեզ ու կլափեն։ Միթէ սարսափում չես դողանիս"։

Մարթան միտը բերեց սրբակրօն եպիսկոպոսին և նահատակին, Իգնատէոս անունով, որ ձգուել էր առիւծների առաջ. նորա օրինակով պատասխանեց նա, „ես մի հատիկ հաճար եմ և պէտք է փշրուեմ գազանաց ատամներովը, որ Քրիստոսի առաջ պիտանի երևեմ մաքուր հացի համար"։

Հայրը բացականչեց մխիթարուելով, „ո՜հ սիրելի դուստր, երանեալ ես դու ըստ որում տպաւորել ես սրտումդ Քրիստոսի վարդապետութիւնը. Հոգին Աստուծոյ թող լուսաւորի և քաջալերի քեզ, որ միշտ հաստատ և անյողդողդ պահպանես այդ վարդապետութիւնը"։

Մայրը արտասուեց իւր մերձ ի մահ



դառներ վերայ, որը իւր հաստատ հաւատարմութեամբը դէպի Աստուած նորէն զօրութիւն տուաւ մորը և վերջինս պատասխանեց, „գնա ուրեմն, սիրելի իմ դուստր. Հոգին Աստուծոյ պահապան լինի քեզ, որ դու յաջողութեամբ վերջացնես պատերազմդ"։

Հայրը մայրը և եղբայրը գրկեցին մատաղահաս նահատակուհին լացով և հեծեծանքով, իսկ նա վերջապէս խլուեցաւ և ուրախալից աղաղակեց. „հայր, մայր և եղբայր մի լայք աւելի։ Ուրախացէք դուք իմ հետ։ Այնպէս է երևում ինձ, կարծես թէ բաց է արդէն երկնքի դուռը այն տեղ միմիանց կպատահենք, այնտեղ Քրիստոսի մօտ կգտնենք մեր յաւիտենական երանութիւնը։" Մեծաւորը դուրս տարաւ նորան։

Երրորդ օրուայ առաւօտուն դարձեալ երևեցաւ մեծաւորը՝ „Ձեր դուստրը", ասաց նա, „արդէն վախճանած է ես եկել եմ պահանջել ձեր որդուն. բայց քանի ժամանակ ունիք մտածելու, վճռեցէք բարին։ Լաւ խորհեցէք յառաջ քան նորան ինձ յանձնելը։ Կամ միթէ դուք ցանկանում էք որ խլէին ձեր բոլոր երեխայքը մի թէ կամենում էք դուք խստասիրտ ծնողներ, ձեր կամակորութեամբ սպանել դորան չարաչար մահով։ Նայեցէք միայն այդ գեղեցկատես, զօրեղ երիտասարդի վերայ. նա է մնացել ձեր երեխաներից նա է ձեր սիրելի միայնակ որդին։ Միթէ ձեր ազնիւ ցեղը պիտի հանգչի դորանով, և ջնջուի ձեր անունը երկրի երեսից։ Նա է ձեր աչքի լոյսը, ձեր կեանքի մխիթարիչը և ձեր ծերութեան հովանաւորը։ Ո՜հ



յիրաւի, ես տեսնում եմ որ նա սիրում ձեզ և կպաշտպանի ձեզ ծերութեան ժամանակ. յորդորեցէք նորան որ պահպանի իւր կեանքը և հնազանդի Թագաւորի հրամանին։ Ի՞նչ օգուտ ձեզ կամ ինչ օգուտ նորան ձեր ունայն ընդդիմակայութիւնից։ Մենք իրաւունք ունենք մի ահալից մահ պատրաստել նորա համար։

„Դուք ոչ մի իրաւունք չէիք կարող ունենալ իմ վերայ եթէ բարձրից տուած չլինէր այդ իրաւունքը" պատասխանեց ազնիւ երիտասարդը։ „Դուք ընդդէմ անձիս ոչինչ աւելի չէք կարող անել բացի Աստուծոյ տուած պատուէրներից։ Եւ միթէ ես չպէտք է հաճոյաբար խմէի այն բաժակը որ մատուցանում է ինձ Երկնային Հայրը, նորա սիրելի որդին մեռաւ բոլոր մարդկանց համար [illegible]մեն

1006
28425
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI — 1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

զոհել կեանքս նորա համար որ խուլը չը-խնայեց մեր համար":

„Ուրեմն գիտցիր" ձայն տուեց մեծա-ւորը որ Թագաւորը կհրամայի քեզ խա-չելու: Քեզ այնպէս քաղցր և յաճախ չէ թուիլ մեխած ձեռներով և ոտներով կախ ընկնել խաչի վերայ համբերել մեխերի գաղտագոտ խոցերին և առանց որ և իցէ զովութեամբ վախճանել անդադար մա-հատանջանքների մէջ": „Ո՜հ որպիսի մը-խիթարութիւն և ուրախութիւն է իմ համար" պատասխանեց քաջասիրտ պատա-նին, որ ես արժանացայ մեռնել Փրկչի մա-հով: Ես կաշխատեմ, Նորա նման տա-նել ամենայն ցաւը, մինչև որ կարողանամ արտաբերել բառս « Կատարեալ է":

„Բարի է սիրելի որդի" ասաց հայրը „Աստուած թող օգնական լինի քեզ մին-



չև ի վերջը: Դու այժմ ի հարկէ երե-տասարդ ես, բայց Աստուծոյ ողորմու-թեամբը քաջասիրտ ես տղամարդի նման, նորա ողորմութիւնը թող լինի քո հետ, որ դու ևս արժանանաս բառերիս. երա-նեալ է այր, որ կրէ համբերութեամբ ըն-փորձանս ի վերայ իւր, զի եթէ գտցի նա փորձեալ, առնուցէ զպսակ կենաց, զոր խոստացաւ Աստուած այնոցիկ որք սիրենն զնա":

Որդին ծալած ձեռքերով լուռ ու մունջ նայեց երկինքին ապա գրկելով հօր և մօրը ամրաքայլ դուրս գնաց սենեակից իսկ մե-ծաւորը հետևեց նորան:

Խեղճ Տիտոսը և նորա բարեպաշտ ա-մուսինը անքուն և աղօթքի մէջ անցկաց-րին գիշերը, մխիթարելով ու քաջալերե-լով մէկ մէկու և առաւօտը հանեցուն

պէս մահուան էին սպասում իւրաքանչիւր ժամին։ Վերջապէս երևեցաւ մեծաւորը և ասաց Տիտոսի ամուսնոյն, Մարիամին. „դու ազնուուհի, ես եկել եմ կոչելու քեզ թագաւորի մօտ։ Դու, որպէս և քո այրը, չդաւաճանեցիք ձեր երեխայքը, միթէ քո մասին ևս անհոգ ես և չես խնայում քո կեանքը։ Յիրաւի ես խղճում եմ, որ այդ քո ազնիւ գլուխը կդնենք փայտատի տակ ըստ որում այդպիսի մահ է քեզ ըսպասում։ Դու ծիծաղումես, դու ուրախ նայումես երկնքին։ Միթէ դու ոչինչի տեղ չես դնում քո սեփական կեանքը որից այժմըս կզրկուիս“։

Իսկ բարեպաշտ և երկնախոհ կինն պատասխանեց. „ես այժմն կզրկուեմ այս անցաւոր կեանքից, իսկ յետոյ կստանամ ես կեանք յաւիտենական։ Ես ուրախ



եմ դարձեալ տեսնել երեխայոցս, ես ցաւում չեմ թողնելով կողակցիս ըստ որում անկասկած այսօր կամ էգուց կհետևէ ինձ հաւասարելով երկնային երանութեան հետ աննշան և մռայլ է այս աշխարհս։ Երկնքում չկայ ոչ մի բաժանումն, ոչինչ արտասուք և ոչ մի հառաչանք։ Այն ինչ որ Աստուած պարգևում է, նորան սիրողներին, ոչ աչք կարող է տեսնել և ոչ ականջ լսել և ոչ մարդկային երանութիւնը կարող է հաւասարուել երկնային երանութեան հետ“։

„Այդ մեր ամենիմաստ մխիթարութիւնն է մեր երանական յոյսը“ ասաց Տիտոսը։ „Մենք այս կեանքում բաւական դառն ժամեր ենք տեսել, մանաւանդ այս վերջին օրերումն կորուսանելով մեր երեխայքը խոր տրտմութեան մէջ ենք։

Սակայն մեր այժմեան, այս և բոլոր երկ-
նային կեանքի ցաւերը արժանի չեն այն
փառահեղութեանը, որ սպասում է մեզ
բարձրումը‘‘:

Մարիամը առնելով ծածկոյթը ձգեց
վերան և ասաց, ,,սիրելի իմ ամուսին, ես
բաժանուելով քեզանից և դուրս գնալով
այս տեղից չկամիմ ողջոյն տալ քեզ: Ո-
րովհետև ես մտնելով աշխարհ կարծու-
մեմ, թէ գնումեմ միայն այս փողոցից մի
այլ տուն, կամ աւելի լաւ, միւս սենեա-
կը, ուր իսկոյն կհետևես ինձ և դու:
Մահը բաժանում է մեզ այստեղ միայն մի
քանի րոպէի, սակայն նա միացնում է մեզ
և մեր երեխայոց այն տեղ Քրիստոսի,
Աստուածամօր, Առաքեալների և այլ բա-
րի մարդկանց հետ յաւիտենական կեան-
քումը: Ուրեմն երբէք հարկաւոր չէ մեզ



տխրել. բոլորը ապացոյց է ուրախութեան,
մենք այդքան երանեալ ենք յոյսով‘‘, նա
շտապեց սենեակից դուրս գնալ ու մեծա-
ւորը հետևեց նորան:

Չանցաւ դեռևս մի ժամ, ահա շտա-
պով դարձեալ եկաւ մեծաւորը և ասաց
,,Տիտոս, հետևիր ինձ Թագաւորի մօտ‘‘:

Մեծաւորը հասցրեց Տիտոսին Թագա-
ւորի առանձնասենեակը, վերջինս կանգ-
նած էր մի սեղանի առաջ, որի վերայ
դարսած էին փառաւոր ծիրանիներկ և
ապրշում հագուստներ զանազան տեսակ
արծաթեայ անօթ, ոսկի, թանկագին քա-
րեր և մարգարիտներ. Տիտոսը խոնարհե-
ցաւ Թագաւորի առաջ, իսկ այն բոլոր
թանկագին բաների վերայ ձգեց միայն մի
արհամարհական հայեացք:

,,Այս ինչքը ի հարկէ անարժան են քո

պատուէին", ասաց Թագաւորը, „մինչև անգամ քո երեխայքը արհամարհեցին այդ թանկագին բաները։ Գնանք միայն ես քեզ ցոյց կտամ աւելի փառաւոր գանձեր"։

„Մի կորցրու ի զուր քո ջանքը, Թագաւոր", պատասխանեց Տիտոսը, „լաւ է տար ինձ այն տեղերը, ուր արնաշաղախ են եղել իմ ամուսնոյ և երեխայոցս մահուամբը։ Ես աւելի ոչինչ չեմ ցանկանում այս աշխարհի ցոյց տուած քո փառաւորութիւնները, ես ոչինչի տեղ եմ դընում"։ „Բայց Թագաւորը կրկնեց իւր խօսքը „արի և տես"։

Նա բացեց դուռը և նորան հրամայեց մտնել։ Տիտոսը մտաւ մի փառաւոր դահլիճ և զարմանքից լուռ և անշարժ կանգնած մնաց, քարեայ արձանի պէս։ Որովհետև



ի՛նչ նկատեց նա, այն տեղ նորա ամուսինը շրջապատած երեք երեխաներով ուրախ և զուարթ նստած էր դահլիճումը և բոլորեքեանքը առ ի սրտէ ուրախութեամբ խօսումէին մէկ մէկու հետ։

Նոքա չնկատեցին Տիտոսին, բայց նա ափշութիւնից չկարողացաւ երկար ժամանակ ուշը վրան հաւաքել։ Ինչպէս գունատուումէն զարհուրանքից նոյնպէս և նա գունատուեցաւ ուրախութիւնից նորա սիրտը խիստ հարհարուումէր, ընչառութիւնը կտրուել էր և լեզուն կպել։ Վերջապէս մօտեցաւ նոցա բացարձակ ձեռներով և աղաղակեց բարձր ձայնով։ „Ո՜հ երկնային հայր, այդ ի՞նչ եմ տեսնում, դու դեռ կենդանի ես, սիրելի իմ ամուսին քեզ սիրելի դուստր, դեռ չեն տաւել կատաղի գազաններին և ձեզ իմ սիրարժան որդեք

դեռ ես չեմ կործանել ձեզ բոլորեցունց, որոց կարծումքի արդէն ամենաչարաչար պատիժներից վախճանած, տեսնումեմ կենդանի։ Այսպէս է երևում աչքիս կարծես թէ դուք մահից յարութիւն էք առել‘‘։

Բոլորը վեր թռան և շտապեցին նորան հանդէպ։ Մարիամը գրկեց նորա, թաց անելով խեր երեսը ուրախութեան արտասունքով երեխայքը կախ էին ընկնում նորա ձեռքից, պաչպչում և շրջափարում էին նորա ծունկերը, բոլորը երանագդաց էին աննկարագրելի կերպիւ։

Թագաւորը զուարճացաւ սրտաշարժ տեսիլից և նորա աչքերի վերայ ես երևեցան պայծառ արտասուք ուրախութեան։ Վերջապէս հանգստացաւ Տիտոսը անչափ ուրախութիւնից և ասաց թագաւորին։



„Բայց, ո՜հ թագաւոր, ասա ինձ ինչու յառաջուց այնպէս խիստ վախեցնում էիր և իմ երեխայոց համար նշանակում էիր սակալից մահավճիռ, իսկ այժմս մեր դէմ այդպէս ողորմած և գթասիրտ ես երևում‘‘։

„Ես իմ պարտականութիւնն եմ համարում, տեղեկացնել քեզ այդ մասին‘‘ պատասխանեց թագաւորը։ „Յիրաւի է ես ցանկանում էի վանել քրիստոնեայքը իմ երկրից․ քեզանից կամեցայ սկսել որպէս ձեր հասարակութեան գլխաւոր պատուարժանից։ Ես մտածում էի 1, եթէ լսես ինձ քո օրինակով կշարժէին և միւսները, իսկ եթէ ոչ, ընդիմանաս խօսքերիս, պատիժը համէր գլխիդ, ահ և երկիւղ կընկնէր նոցա ջանը։ Դու մերժեցիր իմ առաջարկութիւնը, այն ժամանակ

մտածեցի քո երեխայոց միջնորդութեամբը գտնել քո հայրական սրտի ուղղութիւնը և դորանով իմանալ թէ որն ես լաւ համարում հրաժարուել հաւատից թէ մահու տալ քո երեխայքը՚՚։

„Ինչ որ անցէ կացել քո ամուսնոյ և երեխայոց հետ, քեզ անյայտ է բոլորը։ Ես կպատմեմ քեզ այդ մասին և կարծեմ որ անչափ կուրախանաս՚՚։

„Ինչպէս յայտնի է քեզ, ես յառաջուց հրամայեցի կոչել քո կրտսեր որդուն։ Մեծաւորը պատուէր էր տուել ինձանից առել քեզ երեխայի առաջակայ վիճակը։ Նա պատմեց ևս ինձ ձեր և երեխայի առած խօսքերը նորա ներկայութեան ժամանակ՚՚։

„Համոզելով փայփայեցի ես սիրունատես աղայի թշերը և պայծառ մազերի



խոպօպները և ցոյց տուեցի նորան բոլորը, որ ինչ կարող է ուրախացնել երեխային խոստանալով պարգևել նորան այդ բաները։ Բայց նա ծանրադէմ միայն շարժեց իւր գլուխը։ Ես հրամայեցի տանել նորան վառած խարոյկի մօտ և ես ակամայ պիտի զարմանայի տղայի ուրախ և համարձակ պատրաստութիւնը ձգուել կրակի մէջ։ Վերջապէս գթաշարժուեցայ և այնուհետև հրամայեցի իմ պալատում սահմանել նորա համար մի սենեակ և հսկել նորա վերայ հոգալով ամենայն պիտոյքը՚՚։

„Ես դարձեալ ուղարկեցի ձեզ մօտ Մեծաւորին և պատուիրեցի վախացնել ձեզ երեխայի կորստեամբը և կոչել ձեր դուստրը, յառաջուց յայտնելով նորան առաջակայ մահավիճակը։ Մեծաւորը նո-

րան այստեղ բերելով, պատմեց ստուգա-
պէս ինչ որ պատահել էր ձեր մէջը։ Ես
առաջարկեցի նորան ամենընտիր և գեղեց-
կագոյն զարդքը, որի վերայ նորա հասա-
կու աղջկերքը կարող են ցնծալ։ Հրա-
մայեցի ցոյց տալ նորան կատաղի գազան-
ներ, որք կայծակնացայտ աչքերով մտիկ
էին տալիս երկաթեայ վանդակներից և
փափագում էին նորա արեանը բացարձակ
բացելով իւրեանց բերանները։ Քնքոյշ
օրիորդին կանգնեցնել տուի բակի մէջ ան-
դը։ Զինուորականները հեռացան, ես և
շատերը իմ մարդկերանցից մտիկ էինք տա-
լիս պալատի պատուհաններից։ Սակայն
նա կանգնած էր այնտեղ ուրախ և զու-
արթ, անվախ սպասելով վանդակների
բացուելուն։ Ի՞նչպէս կարող էի ես ան-
գութ լինել մինչ այն աստիճան որ թող-



նէի այդպիսի մի գեղեցկաքնքուշ էակ
կտոր կտոր լինել գազանաց ատամներովը.
ես չհամբերեցի":

„Նոյնպէս և անյաղթողը, որպէս վեր-
ջինս և կրտսեր որդին, մնաց նաև երեցը։
Թէպէտ նորան շուտով կարելի էր ըն-
դունել տղայ, քան երիտասարդ, այսու ա-
մենայնիւ նա խօսում էր տղամարդի արժա-
նաւորութեամբ։ Ես հրամայեցի տանել
նորան պատժատեղին, նորա առաջ ընկած
էին տախտակներից շինած խաչը, մուրճը,
և մեխերը։ Սակայն նա ոչ մի երկիւղ
չցուցեց, մինչև անգամ չսպասեց, որ ա-
տենածառայքը ցած խոնարհեցնէին նո-
րան խաչին յարմար, այլ ինքը պառկեց
խաչի վերայ տարածուած ձեռքերով և
ասաց ատենածառաներին, „կատարեցէք
այն, ինչ որ հրամայել են ձեզ։ Ինչպէս

իմ Փրկիչս է մեռել նոյնպէս և ես կամիմ մեռնել: Ցիրաւի շարունակեց Թագաւորը, ձեր երեխայոց վերայ տիրում մի երկնային զօրութիւն, որ յաղթահարում իւրաքանչիւր երկրային կարողութիւնը: Ես ինքս տարայ մեծ որդուդ քրօջ և եղբօր մօտ: Քո ամուսինդ ամենարժան դաստիարակուհի է այսպիսի երեխայոց: Ես բաշխեցի մօրը նորա երեխայքը և այժմ դարձեալ բաշխում եմ քեզ քո ամուսինդ երեխաներով‘‘:

Թագաւորը գրկեց Տիտոսին և ասաց. ,,այն հաւատը որ բերում այդպիսի պտուղներ, յօրինում այդպիսի բարի մարդիկ, ծնողաց և երեխայոց միաւորում քնքոյշ կապով, մահուան ժամանակը այդպիսի վստահութիւն է տալիս, որ մահից յետոյ ցուցանում հաստատ յոյսեր յաւիտենական կեանքի, այդ մի ԵՐԿՆԱՅԻՆ ՀԱՒԱՏ է: Քո և երեխայոցդ միջնորդութեամբը ուսայ ամենից առաջ ինչն է Ամենաբարձրեալը և Փառաւորը, ինչ է երկնային պտուղը, ք̃ քրիստոնէութիւնը:



,,Եւ այսպէս, սիրարժան Տիտոս‘‘, շարունակեց նա, ,,լինենք բարեկամ. ես ինքս հաստատապէս վճռել եմ քրիստոնեայ դառնալու: Ընդունեցէ՛ք ինձ, դուք ազնիւ բարի մարդիկ, ձեր ընտանեաց մէջ այո ես շատ կցանկանայի պատկանել ձեր քրիստոնէական հասարակութեանը: Ես յառաջուց գուշակում եմ որ մեր երկրում անդադար հալածանքներ կ'կրեն քրիստոնեայքը: Ես գիտեմ որ պարտ է ինձ բաց թողուլ իմ Թագը. բայց ինչ են երկրային Թագերը այն Թագին դէմ, որին

կարող է հանել իւրաքանչիւր մի աննշան մարդը երկրէն ի հարկէ առանց որ և իցէ հաւատարութեան, երկնային թագն է փառահեղագոյն։

Հրատարակիչ

Ա. Տէր Մարութեանց։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Г.С.С.Р. Публичная Библиотека
7/XI – 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՄԻՏԱՀԱՆՎԱԾ Է 1954 Թ

1567